**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ.
(0322)6-06-24 , darpas.lori@mta.gov.am

N 388
*14 նոյեմբեր 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 76-ից 81 որոշումները և աշխատակազմի քարտուղարի թիվ 09 հրամանը:
Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Դ. Վարդանյան*
*0322 60624*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 76

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 06-033-0014-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Սեյրանի Ալավերդյանի դիմումը, <<Արտյոմ Սաքանյան>> Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 2-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 82 հասցեում փաստացի առկա է բնակելի տան կառուցման և սպասարկման համար սահմանազատված 0.02517 հա մակերեսով հողամաս, դրա վրա առկա է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 60.08քմ շինություն, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, նշված անշարժ գույքի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝

Որոշում եմ.

1. Ճանաչել Սամվել Սեյրանի Ալավերդյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 06-033-0014-0002 ծածկագրում գտնվող 0.02517 հա հողամասի և նույն հողամասի վրա գտնվող 60.08 քմ քոթեջի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Դարպաս համայնք 2 -րդ փող, 4-րդ նրբ. 82 քոթեջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 77

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0053-0006 ծածկագրի 0.44 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փող.,9 փկղ, 1 փոստային հասցեն:
2.Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 78

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0070-0001 ծածկագրի 0.310 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 7 փող.,1 փկղ, 11 փոստային հասցեն:
2.Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գ րանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 79

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0054-000 9ծածկագրի 0.231 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 6 փող.,1 փկղ, 11 փոստային հասցեն:
2.Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 80

## «ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դարպաս համայնքի ավագանում 2019թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 30 որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ կոդվածի 1 մասին 16-րդ և 24-րդ կետերով՝
Որոշում եմ.

1.Ճանաչել 3 փողոց, 5հասցեում «Դարպաս համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից օգտագործվող շինության և դրա համար առանձնացված հողամասի սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետով « Դարպաս համայնքի մանկապարտեզ » ՀՈԱԿ-ին հանձնվող գույքը թույլատրել օգտագործել միայն նախակրթական ծրագրերի համար:
3.Դարպաս համայնքի և «Դարպաս համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջև կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 81

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 06-033-0014-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ՍԵՅՐԱՆԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Սամվելի Ալավերդյանի դիմումը, <<Արտյոմ Սաքանյանի>> Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 2-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 82 հասցեում փաստացի առկա է բնակելի տան կառուցման և սպասարկման համար սահմանազատված 0.02517 հա մակերեսով հողամաս, դրա վրա առկա է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 60.08քմ շինություն, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, նշված անշարժ գույքի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝
Որոշում եմ.

1. Ճանաչել Սեյրան Սամվելի Ալավերդյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 06-033-0014-0002 ծածկագրում գտնվող 0.02517 հա հողամասի և նույն հողամասի վրա գտնվող 60.08 քմ քոթեջի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 76 որոշումը:
4. Անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Դարպաս համայնք 2 -րդ փող, 4-րդ նրբ. 82 քոթեջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Հ Ր Ա Մ Ա Ն

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 09

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով.
Հրամայում եմ.

Դարպաս համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-2) Արթուր Աբրահամյանին և երկրորդ կարգի մասնագետ(3.3-1) Լիանա Առաքելյանին ս/թ նոյեմբերի 04-ից մինչև 14-ը ուղարկել ք.Վանաձոր համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

**Աշխատակազմի քարտուղար՝** **ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**